Քաղաքացիական գործ թիվ՝ **ԵԴ2/25925/02/23**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)

նախագահությամբ՝ դատավոր Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆԻ
2023 թվականի օգոստոսի 23-ին

Ուսումնասիրելով «ՋԵՐՄԱԷՆԵՐԳՈ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

1. Ընկերության ներկայացուցիչը 2023 թվականի օգոստոսի 9-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ «ԵՊՀ» հիմնադրամի՝ խնդրելով ոչ իրավաչափ և անվավեր ճանաչել «ԵՊՀ» հիմնադրամի 06.07.2023 թվականի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/24 որոշումը:

Հայցադիմումը դատավոր Ա. Մուշեղյանին է մակագրվել 2023 թվականի օգոստոսի 17-ին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել 2023 թվականի օգոստոսի 18-ին:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Ներկայացված միջնորդությունը բավարարելու պայմաններում, ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ընդդատյա է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 121-122-րդ հոդվածներին և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ, 125-րդ, 188-րդ, 199-200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՋԵՐՄԱԷՆԵՐԳՈ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «ԵՊՀ» հիմնադրամի՝ «ԵՊՀ» հիմնադրամի 06.07.2023 թվականի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/24 որոշումը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականի հոկտեմբերի 4-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ**